ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ НОР АРТАГЕРСА

6-ը դեկտեմբերի, 2013 թվական
Թիվ- 116

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, Նոր Արտագերսի գյուղապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 6-ին կայացած թիվ 6 նիստի թիվ 2 Ն որոշումով հաստատված 2014 թվականի բյուջեն:

Առդիր 6 թերթ

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11879-13
«10» 12 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

6-ը դեկտեմբերի , 2013թվական N –2 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ կետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի 2014թ.-ի բյուջեի սպասվող եկամուտները՝ հավելված 1, բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ հավելված 2, բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ հավելված 3:

2. Հաստատել գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների 2014թ.-ի հաստիքներն ու դրույքաչափերը՝ հավելված 4:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանիներ՝

1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Զ Ջավոյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՂԵՐՁ

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և « Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով Ձեր քննարկմանն է ներկայացվում Նոր Արտագերս գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն:

Նոր Արտագերս գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի քառամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նոր Արտագերս գյուղական համայնքի 2014թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝ Ընդամենը 33456.1 հազար դրամ:

Նոր Արտագերս գյուղական համայնքի 2014թ. բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել է 11976.2 հազար դրամ:

Պետական բյուջեից տրվող դոտացիան՝ 19629.9 հազար դրամ:

2014թվականին հարկերի գծով նախատեսվել է 10596.2հազար դրամ, որից 200.0հազար դրամ շենք. շին. գույքահարկ, 8500.0 հազար դրամ հողի հարկ և 1896.0 հազար դրամ փոխադրամիջոցների գույքահարկ:

Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձնման հաշվարկները:

Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր նախատեսվել է 180.0 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ դոտացիա 19629.9 հազար

դրամ՝ հիմք «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է1850.0հազար դրամ:

Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան՝ կից տեղեկություններ: Նախորդ 2012թվականի փաստացի կատարված, 2013թվականի հաստատված և 2014թվականի նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է (համեմատական 1):

ԾԱԽՍԵՐ

Նոր Արտագերս գյուղական համայնքի 2014թվականի բյուջեով ծախսերը նախատեսվել են՝ Ընդամենը 33456.1 հազար դրամ,

այդ թվում՝

Ընթացիկ ծախսերի գծով՝ 33456.1 հազար դրամ,իսկ կապիտալ ծախսերի համար 0.0 հազար դրամ:

Նոր Արտագերս գյուղական համայնքի 2014թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում (հատված 2,3,6):

Համայնքի 2014թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2012-2013թ,թ բյուջեի փաստացի կատարված և 2014թ. սպասվելիք ծախսերով:

ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 17778.7 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

01բաժին 1 խումբ 1 դաս՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով նախատեսվել է 15750.2 հազար դրամ,որից ընթացիկ ծախս՝15750.2հազ. դրամ,:

01բաժին 3 խումբ 3 դաս՝ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 1728.5հազար դրամ

01բաժին 6խումբ 1 դաս՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 300.0հազար դրամ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 04 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 2000.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

04 բաժին 5 խումբ 1 դաս՝ « Ճանապարհային տրանսպորտ» ծրագրով 2000.0հազար դրամ ընթացիկ ծախս :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 1320.3 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագրով 1320.3 հազար դրամ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ)

06 ԲԱԺԻՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 4264.3 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

06 բաժին 3 խումբ 1 դաս՝ « Ջրամատակարարում» ծրագրով 4264.3 հազար դրամ:

07 ԲԱԺԻՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 200.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ,ԱՅԴ ԹՎՈՒՄ

07.բաժին 6 խումբ 2 դաս ,,Առողջապահության այլ դասի պատկանող ծրագրով 200.0 հազար դրամ

08 ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 2742.8 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

08 բաժին 2 խումբ 1 դաս՝ « Գրադարաններ » ծրագրով 1428.5 հազար դրամ,որից 1428.5 հազար դրամ ընթացիկ ծախս:

08 բաժին 2 խումբ 3 դաս՝ « Մշակույթի տներ , ակումբներ » ծրագրով 714.3 հազար դրամ:

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակութային հիմնարկներ» ծրագրով 600.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են համայնքային նշանակության միջոցառումների գծով ծախսերը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 2400.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

10 բաժին 7 խումբ 1 դաս՝ « Սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող)» ծրագրով անապահով խավերին մասնակի օգնության համար նախատեսվել է 1800.0 հազար դրամ, կազմակերպություններին աջակցության համար 100.0 հազար դրամ :

10բաժին3 խումբ1 դաս՝Հարազատին կորցրած անձինք ծրագրով՝ թաղման ծախսերի մասնակի հատուցման համար նախատեսվել է 300.0 հազար դրամ:

10բաժին.4խումբ1դաս՝ Ընտանիքի անդամներ և զավակներ ծրագրով համայնքի բնակիչներն ծննդյան միանվագ գումար հատկացնելու նպատակով նախատեսվել է 300.0հազար դրամ

Օգնությունները տրվում են տարին մեկ անգամ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 2650.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

11 բաժին 1 խումբ 2 դաս՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ»

2650.0 հազար դրամ,
Նախորդ 2012թվականի փաստացի կատարված, 2013թվականի

հաստատված և 2014թվականի նախատեսված ծախսերի՝ գործառնական և

տնտեսագիտական դասակարգման, դիֆիցիտի, մարման աղբյուրների ,

առանձին ցուցանիշների համեմատականները կցվում են (համեմատական

2,3,4,5,6):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N2 - Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր-Արտագերս գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» N2-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՀԱԿՈԲՅԱՆ

04403432
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզ
Նոր Արտագերսի գյուղապետարան
№ 535
10 12 2013 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» N2 -Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ՀԱԿՈԲՅԱՆ